ԻՐԱՆԻ «ՇԻԱԿԱՆ» ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԵՏՍԱԴԱՄՅԱՆ ԻՐԱՔԻ ՆԿԱՏՄԱՄԲ: ՆՈՐ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ՆՈՐ ՄԱՐՏԱՀՐԱՎԵՐՆԵՐ

2003թ. ԱՄՆ-ի ջանքերով Իրաքում Սադդամ Հուսեյնի իշխանության տապալումը նոր փուլ բացեց Իրաքում Իրանի «շիական» քաղաքականության համար: Իրաքի՝ որպես երկար տարիներ Իրանի տարածաշրջանային հավակնությունները զսպող սունիական արաբական ազդեցիկ ուժի կորուստը, ինչպես նաև Իրաքի շիաների քաղաքական ակտիվացումը էականորեն մեծացրեցին Իրանի արտաքին քաղաքական ռազմավարության մեջ շիական գործոնի օգտագործման արդյունավետությունը: Դեռևս 1980-ական թվականներին իրանական ղեկավարությունն իր «իրաքյան» քաղաքականության մեջ շիական գործոնն օգտագործում էր Բաղդադի Բա'ասական սունիական վարչակարգի դեմ պայքարելու, Իրաքում իր շիական հեղափոխական գաղափարախոսությունը տարածելու և այնտեղ իրանական օրինակով շիական իսլամական պետություն ստեղծելու համար: Իր այդ նպատակների իրագործման համար Թեհրանն ակտիվորեն օգտագործում էր Սադդամ Հուսեյնին ընդդիմադիր իրաքյան շիական գլխավոր խմբավորումներին, որոնց շարքում առաջնահերթ տեղ էին զբաղեցնում դեռևս 1957թ. Իրաքի Նաջաֆ քաղաքում հիմնված Իրաքի առաջին շիական քաղաքական շարժումը՝ «Ալ-Դաուա Ալ-Իսլամիյան» (Իսլամական Կոչ), ինչպես նաև Իրաքի ազդեցիկ շիա հոգևորական Մուհամմեդ Բաքիր Ալ-Հաքիմի կողմից և իրանական իշխանությունների օժանդակությամբ 1982թ. Իրանում ստեղծված «Իրաքի Իսլամական Հեղափոխության Գերագույն Խորհուրդը» (ԻԻՀԳԽ):[1] Այդ շիական խմբավորումները, որպես Սադամին ընդդիմադիր շարժման մի մաս, ոչ միայն 1980 և 1990-ական թթ. կարևոր դեր խաղացին Թեհրանի իրաքյան ռազմավարության մեջ, այլև տարագրության բազմաթիվ տարիներ անցկացնելով Իրանում, սերտ կապեր հաստատեցին Իրանի անվանի շիա հոգևորականների հետ: Այս ամենը թույլ տվեց Թեհրանին 2003թ. սկսած ակտիվ ջանքեր գործադրել իրանամետ շիական խմբավորումների միջոցով հետսադամյան Իրաքում իր ազդեցությունը տարածելու համար: Թեհրանն ակտիվացրեց իր կապերը Իրաքի շիական գլխավոր ուժերի՝ Դաուայի և ԻԻՀԳԽ-ի հետ (որը 2007թ-ից սկսեց կոչվել ԻԻԳԽ), որոնք Սադամի իշխանության տապալումից, ինչպես նաև Իրաքի

ժամանակավոր կառավարության ստեղծումից հետո հանդես եկան որպես Իրաքի շիաներին ներկայացնող երկու հիմնական կուսակցությունները:[2] Հետսադամյան Իրաքում Թեհրանի աջակցությանն ու հովանավորությանն արժանացավ Իրաքի շիաների շրջանում հայտնի գործիչ, անվանի Ալ-Սադր ընտանիքին պատկանող Մուկթադա Ալ-Սադրը, ով իր ստեղծած զինված խմբավորման՝ Մահդիի բանակի միջոցով սկսեց պայքարել Իրաքի քաղաքական դաշտում տեղ զբաղեցնելու համար: Թեհրանը 2003թ. սկսած ակտիվացրեց իր կապերը նաև իրանական ծագում ունեցող Իրաքի շիաների առաջնորդ Այաթոլլահ Ալի Ալ-Սիսթանիի հետ, ով մեծ ազդեցություն և հեղինակություն ունի ոչ միայն Իրաքի, այլև ամբողջ աշխարհի շիաների շրջանում: Պետք է նշել, որ Իրաքում իրանամետ շիական ուժերի դիրքերը ուժեղացան 2005թ. դեկտեմբերին, երբ խորհրդարանական ընտրություններում հաղթանակ տարավ «Միացյալ Իրաքյան Դաշինք» կոալիցիան, որի մեջ մտնում էին Իրաքի շիական գլխավոր խմբավորումները՝ ԻԻՀԳԽ և Դաուան, որոնք շարունակում էին սերտ կապեր պահպանել Թեհրանի հետ:[3] 2003թ. սկսած Իրաքում ներքաղաքական նման զարգացումները և Հարավային Իրաքում «իրանական գործոնի» ակտիվացումը թույլ տվեց մի շարք հետազոտողների Իրանի «շիական» քաղաքականությունը բնորոշել որպես «հարձակվողական և ագրեսիվ», որի նպատակն է օգտվել հետսադդամյան Իրաքում ստեղծված «ուժային դատարկությունից» և իրանամետ շիական խմբավորումների միջոցով մեծացնել իր քաղաքական ազդեցությունն Իրաքում, ինչպես նաև ամբողջ արաբական աշխարհում:[4] Նմանատիպ եզրակացության եկավ նաև ճգնաժամների ուսումնասիրման միջազգային խումբը, որը Իրաքում և Իրանում անկախ հետազոտություն իրականացնելուց հետո իր զեկույցում նշեց, որ «Վաշինգտոնը, արաբական երկրները և Իրաքի ղեկավարության առանձին ներկայացուցիչներ մեղադրում են Իրանին Իրաքում շիական իսլամական հանրապետություն ստեղծելու, ընտրական գործընթացներին միջամտելու և խոովարար շիա խմբավորումներին աջակցելու փորձերի մեջ»:[5] Սակայն եթե Իրաքում Իրանի «շիական» քաղաքականությունն ուսումնասիրենք ներիրաքյան և տարածաշրջանային զարգացումների համատեքստում, ապա պարզ կդառնա, որ Իրաքում Թեհրանի ռազմավարությունը հիմնականում «պաշտպանողական» բնույթ ունի և ուղղված է չեզոքացնելու այն մարտահրավերները, որոնք ի հայտ եկան ինչպես Իրաքում ուժային

նոր հավասարակշռության ձևավորման պայմաններում, այնպես էլ տարածաշրջանում տեղի ունեցած աշխարհաքաղաքական փոփոխությունների արդյունքում: Նախ նշենք, որ 2003թ. սկսած Թեհրանը փորձում է Իրաքյան շիա խմբավորումների միջոցով թույլ չտալ հետսադամյան Իրաքի քաղաքական դաշտում սուննիների դերի մեծացում, քանի որ, ինչպես պատմությունն է վկայում, երկար տարիներ Բաղդադի հակահիրանյան քաղաքականության հիմնական պատճառը եղել է Իրաքում սունի արաբների բազմամյա իշխանությունը և արաբ ազգայնականություն ձևավորելու միտումները: Իրաքում նոր և հզոր սունի ամերիկամետ վարչակարգի ձևավորման պարագայում Բաղդադը կարող է դառնալ տարածաշրջանում ԱՄՆ-ի մերձավորարևելյան քաղաքականության իրականացման հիմնական հենարանը, ինչպես նաև վերածվել Պարսից Ծոցում և Մերձավոր Արևելքում արևմտյան շահերի պահպանման երաշխավորի: Թեհրանը վախենում է, որ նոր Իրաքում սուննիների դիրքերի ուժեղացումը կարող է մեծացնել տարածաշրջանի սունի արաբական երկրների (հատկապես Սաուդյան Արաբիայի) ազդեցության լծակներն ինչպես Իրաքում, այնպես էլ ողջ տարածաշրջանում, որն իր հերթին կարող է տարածաշրջանում մեկուսացնել շիական Իրանին: Իրաքում «սուննիական գործոնի» ակտիվացումը կարող է նաև իրանական ղեկավարության համար անցանկալի զարգացումներ առաջացնել Իրանի հարավարևմտյան Խուզեստան նահանգում բնակվող էթնիկ արաբների շրջանում, որոնք հիմնականում սուննիներ են: Իրանի համար թե ներքաղաքական և թե արտաքին քաղաքական տեսանկյունից լրջագույն վտանգ է Իրաքում քրդական գործոնի ակտիվացումը: Հարկ է նշել, որ սկսած 2003թ. ԱՄՆ-ի գործողությունները նպաստեցին Իրաքի քաղաքական կառուցվածքում քրդերի դերի մեծացմանը, որն իր հերթին ավելի ակտիվացրեց քրդերի պայքարն Իրաքում տարածքային-քաղաքական կառուցվածքի ֆեդերատիվ ձև ստեղծելու ուղղությամբ, որտեղ Իրաքյան Քրդստանին կտրվի ֆեդերացիայի սուբյեկտի կարգավիճակ: Հարկ է նշել, որ էթնիկական սկզբունքի վրա հիմնված ֆեդերալիզմի նման պահանջները կարող են Իրաքի տարածքային ամբողջականության տրոհման վտանգ առաջացնել (հյուսիսում՝ քրդական, կենտրոնում՝ սունի-արաբական, և հարավում՝ շիա-արաբական): Պետք է հաշվի առնել նաև, որ Իրաքում քրդերի դերի մեծացումը հնարավորություններ կտա Վաշինգտոնին և Թել-Ավիվին քրդական գործոնը օգտա-

գործել՝ ինչպես Իրաքյան Քրդստանում իրենց դիրքերն ամրապնդելու, այնպես էլ Իրանի վրա ճնշում գործադրելու համար:[7]

Պարզ է, որ Իրաքի սունիի արաբներից և քրդերից սպառնացող վերոնշյալ մարտահրավերները կանխելու, ինչպես նաև Իրաքի տարածքային տրոհման վտանգը չեզոքացնելու որպես հիմնական միջոց՝ Իրանը տեսնում է Իրաքի քաղաքական կառուցվածքում շիաների դիրքերի ամրապնդումը և նրանց ազդեցության մեծացումը: Իրանի կողմից Հարավային Իրաքում շիական-իսլամական գործոնի տարածումը ուղղված է կանխելու Իրաքում աշխարհիկ կարգերի ձևավորումը: Պետք է նշել, որ վերոնշյալ ներքաղաքական վտանգների հետ մեկտեղ առկա են նաև արտաքին մարտահրավերներ, որոնք ստիպում են իրանական ղեկավարությանը ակտիվացնել Իրաքի շիական տարբեր ուժերի հետ իր կապերը: Դա առաջին հերթին կապված է տարածաշրջանում աշխարհաքաղաքական այն փոփոխությունների և Իրանի ազգային անվտանգությանը սպառնացող այն մարտահրավերների հետ, որոնք ի հայտ եկան 2001թ-ից Բուշի վարչակազմի որդեգրած նոր տարածաշրջանային քաղաքականության արդյունքում: Աֆղանստանում թալիբների, իսկ Իրաքում Սադամ Հուսեյնի իշխանության տապալումը և այնտեղ ԱՄՆ-ի ռազմական ներկայությունն Իրանին փաստորեն դրեց ամերիկյան ուժերի շրջափակման մեջ: Այս պայմաններում Թեհրանի անվտանգության սպառնալիքներն առավել ուժեղացան տարածաշրջանում նոր քաղաքական-անվտանգության մթնոլորտ ստեղծելու և Թեհրանի դիրքերը թուլացնելու Վաշինգտոնի քաղաքականության պարագայում: Այդ ամենի ապացույցն է 2003թ. Վաշինգտոնի կողմից առաջ քաշած «Մեծ Մերձավոր Արևելք» ծրագիրը, որը ուղղված է Մարոկոյից մինչև Պակիստան ստեղծելու աշխարհաքաղաքական նոր տարածություն՝ նպատակ ունենալով այնտեղ թուլացնել քաղաքական իսլամը և հակաամերիկյան վարչակարգերը, մեծացնել Իսրայելի կշիռը և վերահսկողություն սահմանել մերձավորարևելյան նավթային ռեսուրսների վրա: Փորձագետները այդ ծրագիրը բաժանում են երեք մասի՝ «անվտանգության պայմանների ստեղծման փուլ», որը ուղղված է վերափոխելու Մերձավոր Արևելքում հակաամերիկյան քաղաքական վարչակարգերը, «պետականության ձևավորման փուլ», որտեղ նպատակ է դրվում Մերձավոր Արևելքի երկրներում ստեղծել աշխարհիկ, իսլամից անջատ ամերիկամետ վարչակարգեր, և «ընդհանուր գաղափարախոսության հաստատման փուլ», որի գլխավոր նպատակն է այդ

երկրներում տարածել արևմտյան քաղաքական մշակույթը և հասարակական արժեքները:[8] Այս պարագայում եթե հաշվի առնենք, որ Վաշինգտոնը հետսադդամյան Իրաքում աստիճանաբար իրականացնում է իր այդ ծրագիրը, ապա հասկանալի կլինի Իրաքում շիական գործոնի միջոցով իր կրոնա-քաղաքական ազդեցությունը տարածելու Թեհրանի քաղաքականության էությունը: Իրանի «իրաքյան» քաղաքականության վրա մեծ ազդեցություն է գործում նաև Վաշինգտոնի քաղաքականությունը, որը նպատակ ունի օգտագործել Ծոցի երկրների, Եգիպտոսի, Հորդանանի անհանգստությունը՝ կապված Իրաքում և արաբական աշխարհում Իրանի դերի մեծացման, ինչպես նաև տարածաշրջանում «շիական առանցքի» ձևավորման հետ, և «սառը պատերազմյան ոճով» տարածաշրջանում ստեղծել «հակաիրանական» տունի արաբական ճակատ, որը կօգտագործվի՝ ինչպես տարածաշրջանում Իրանին մեկուսացնելու, այնպես էլ Իրանի ատոմային ծրագրի վրա ճնշում գործադրելու համար:[9] Հասկանալի է, որ ԱՄՆ-ը տարածաշրջանային նոր անվտանգության համակարգ ձևավորելու և Իրանին զսպելու իր քաղաքականության մեջ կենտրոնական տեղ է հատկացնում Իրաքին և փորձում է նրան ամեն կերպ ներքաշել վերոնշյալ արաբական դիվանագիտական կոալիցիայի մեջ: Պարզ է, որ հետսադդամյան Իրաքի՝ որպես տարածաշրջանային նոր ուժային կենտրոնի ի հայտ գալը պահանջում է Ծոցի շրջանում քաղաքական-անվտանգության համակարգի վերանայում, և այստեղ Իրանի գլխավոր խնդիրն է թույլ չտալ նման համակարգի ստեղծման գործում արտաքին ուժերի միջամտությունը՝ դրանով իսկ իրեն և Իրաքին վերապահելով անվտանգություն ապահովելու հիմնական դերը: Հենց Ծոցի քաղաքական-անվտանգության կառուցվածքի վրա իր ազդեցությունը մեծացնելու, տարածաշրջանում Վաշինգտոնի դիրքերը թուլացնելու, ինչպես նաև Բաղդադին իր ռազմավարական դաշնակցի վերածելու Իրանական քաղաքականության համատեքստում նաև պետք է դիտել Իրաքում շիական խմբավորումների միջոցով իր ազդեցությունը մեծացնելու Թեհրանի մարտավարությունը: Իրաքում Իրանի ամուր դիրքերը վերջինիս կարող են նաև դնել առավել շահեկան բանակցային դիրքում՝ կապված տարածաշրջանային մի շարք խնդիրների, այդ թվում ատոմային ծրագրի հարցում:

Այս առումով պետք է նշել, որ թեև Իրաքի գլխավոր շիական ուժերը (ԻԻԳԽ, Դաուա, Սադրի կողմնակիցներ և այլն) մեծ դեր կարող

են խաղալ Իրանի տարածաշրջանային քաղաքականության համատեքստում, սակայն մյուս կողմից Իրաքի ապագա քաղաքական կառուցվածքի նկատմամբ նրանց տարբեր դիրքորոշումները կարող են առավել դժվարացնել Իրաքում իրանամետ շիական միացյալ ուժ ստեղծելու Թեհրանի ռազմավարությունը:[10] Պետք է նշել նաև, որ սկսած 2003թ. Իրաքյան շիական խմբավորումները միանգամայն տարբեր դիրքորոշումներ որդեգրեցին ինչպես Իրանի, այնպես էլ Իրաքում Վաշինգտոնի քաղաքականության նկատմամբ: Օրինակ՝ եթե Մ. Սադրը և նրա կողմնակիցները 2003թ. սկսած պաշտպանում են Իրաքում իսլամական պետություն ստեղծելու իրանական ղեկավարության տեսակետը, ապա Նաջաֆի շատ ազդեցիկ հոգևորականներ (Ալի ալ-Սիսթանիի գլխավորությամբ) դեմ հանդես եկան, որպեսզի կրոնագետ-հոգևորականները ներգրավվեն երկրի պետական կառուցվածքի մեջ չպաշտպանելով «վելայաթ-ե ֆաղիհ»-ի վրա հիմնված Իրանի ներկայիս իշխանական կառուցվածքը: Ինչ վերաբերում է Իրաքի շիաներին ներկայացնող երկու հիմնական կուսակցություններին՝ ԻԻՀԳԽ-ին (որը 2007թ.-ից կոչվում է ԻԻԳԽ) և Դաուային, ապա պետք է նշել, որ եթե Իրանում գտնվելու տարիներին նրանք աջակցում էին իրանական վարչակարգին և պաշտպանում Իրաքում ապագա քաղաքական կառուցվածքի նրա տեսակետը, ապա Իրաք վերադառնալուց հետո նրանք (հատկապես Դաուան) սկսեցին որոշ չափով նահանջել Իրաքում իսլամական պետություն ստեղծելու գաղափարից և փոխարենը հանդես եկան երկրի կառավարման համակարգում կրոնի առավել քիչ դերի անհրաժեշտության մասին: Նշենք նաև, որ ի տարբերություն Մ. Սադրի, ով ցուցաբերեց խիստ հակաամերիկյան կողմնորոշում և հանդես եկավ Իրաքից ԱՄՆ-ի զորքերի դուրս բերման օգտին, ԻԻԳԽ-ը և Դաուան օտարերկրյա զորքերի ներկայությունը կարևոր համարեցին Իրաքում անվտանգություն հաստատելու և սունիի ծայրահեղականության դեմ պայքարելու համար, իսկ որոշ շիա աշխարհիկ խմբավորումներ, որոնք կապված են Իյյադ Ալավիի և Ահմադ Չալաբիի հետ, որդեգրեցին ընդգծված ամերիկամետ դիրքորոշում:[11]

Նման պարագայում հաշվի առնելով Իրաքի և Իրանի շիական համայնքների միջև առկա տարբերությունները, ինչպես նաև Թեհրանի «իրաքյան» քաղաքականության նկատմամբ Իրաքի շիա խմբավորումների շրջանում առկա տարբեր մոտեցումները՝ չպետք է բացառել, որ հետսադդամյան Իրաքում շիաների չափազանց ակտիվացումը և

որպես ինքնուրույն կրոնական ուժ դառնալու նրանց հեռանկարը կրոնագաղափարական տեսանկյունից լուրջ մարտահրավեր կարող է լինել Իրանի շիա հոգևոր ղեկավարության համար: Եթե 1980 և 1990-ական թթ. Իրաքի շիական կենտրոններից մի շարք շիա ազդեցիկ հոգևորականների գաղթն Իրան զգալիորեն թուլացնում էր ինչպես կրոնի և քաղաքականության, այնպես էլ կրոնական և քաղաքական իշխանության հստակ տարանջատման օգտին հանդես եկող Նաջաֆի ազդեցիկ շիական կենտրոնների դիրքերը և զգալիորեն մեծացնում էր Ղում քաղաքի, և Իրանի շիական վերնախավի հեղինակությունը, ապա այժմ Իրանի հսկողությունից դուրս գտնվող կրոնական իշխանության նոր և հզոր աղբյուրի ի հայտ գալը՝ ի դեմս իրաքյան շիաների կարող է մեծացնել Նաջաֆի և Քարբալայի դերը և դրանով խարխլել Ղումի՝ որպես համաշխարհային շիիզմի կենտրոնի կարգավիճակը: Այս առումով Դուրհամ Համալսարանի պրոֆեսոր Ա. Եհթեշամին նշում է, որ «Նաջաֆի՝ որպես շիիզմի կենտրոնի հզորացումը ոչ միայն կարող է մարտահրավեր լինել Ղումին և օգնել շիա արաբներին շիական հարցերում առավել մեծ դեր ունենալ այլև կարող է նշանակալի մտավոր և գաղափարական ներգործություն ունենալ Իրանի քաղաքական կառուցվածքում առկա այն ուժերի վրա, որոնք այժմ բացահայտ կասկածի տակ են դնում «Ֆաղիհի» ձեռքերում կենտրոնացած կրոնա-քաղաքական իշխանության արդյունավետությունը»:[12]

Այս ամենը մեզ թույլ է տալիս եզրակացնել, որ շիական գործոնն Իրանի «իրաքյան» քաղաքականության վրա ունի «սահմանափակ» ազդեցություն, որը պայմանավորված է ոչ միայն Իրաքի կրոնաէթնիկական սոցիալ-քաղաքական և կրոնամշակութային առանձնահատկություններով, Իրանի և Իրաքի շիական տարբեր կենտրոնների միջև առկա որոշակի գաղափարական տարաձայնություններով, այլ նաև այն հանգամանքով, որ Իրաքի շիաների մեծամասնության շրջանում, որպես համախմբման հզոր շարժիչ ուժ, հանդես է գալիս ոչ թե կրոնագաղափարական և համայնքային ինքնության, այլ առաջին հերթին ազգային ինքնության գործոնը, ինչը բնականաբար իր հերթին նվազեցնում է նաև Իրաքում շիական-գաղափարական առանցք ձևավորելու Թեհրանի հնարավորությունները:

Այնուամենայնիվ չպետք է անտեսել այն փաստը, որ 2003թ. սկսած Իրաքի քաղաքական կառուցվածքում շիաների դիրքերի ամրապնդումը լուրջ հիմքեր ստեղծեց՝ Իրանի և Իրաքի շիաների փոխհա-

ռաբերությունները առաջին անգամ նորմալ մշակութային և քաղաքական հիմքի վրա դնելու համար: Այլ կերպ ասած, եթե նախորդ երկու տասնամյակներում Իրանի իրաքյան քաղաքականության մեջ շիական գործոնը հիմնականում կարևոր էր համարվում Իրաքի Բա'ասական իշխանության դեմ շիական խմբավորումներ ստեղծելու համատեքստում, ապա այժմ այն դիտվում է որպես կարևոր միջոց, որը թույլ կտա շիական ուսմունքի կրոնազաղափարական պոտենցիալն օգտագործել կառավարությունների մակարդակով հարաբերությունները լավացնելու համար: Այստեղ պետք է նկատի ունենալ նաև փոխհամագործակցության այն լայն հեռանկարները, որոնք 2003թ. սկսած բացվեցին շիական ուսմունքի համաշխարհային կենտրոնների՝ Ղումի և Նաջաֆի միջև: Այս ամենի վառ ապացույցն է տարեկան հարյուր հազարավոր իրանցի ուխտավորների այցելությունները Իրաքի շիական սրբավայրեր, երկու երկրների շիական կենտրոնների միջև կրոնական սեմինարների հաճախ անցկացումը և այլն:

---

[1] Ofra Bengio, Shiis and Politics in Ba'thi Iraq, Middle Eastern Studies, Vol.21, No 1(Jan. 1985) p. 3

[2] Kayhan Barzegar, Understanding the Roots of Iranian Foreign Policy in the New Iraq, Middle East Policy, Vol.7, No.2, Summer 2005, p.54

[3] Kenneth Katzman, Iran's Activities and Influence in Iraq, Congressional Research Service (CRS), June 4, 2009, p.1

[4] Geoffrey Kemp, Iran and Iraq: The shia connection, Soft Power, and the Nuclear Factor, Special Report, United States Institute of Peace (www.usip.org) November 2005. pp. 4-12. A.W. Sammi, The nearest and dearest enemy: Iran after the Iraq war, Middle East Review of International Affairs, Vol. 9, No.3 (September 2005) pp. 36-41, Beehner L., Bruno G., Iran□s Involvement in Iraq, Council of Foreign Relations, March 3, 2008

[5] Iran in Iraq: How Much Influence?, ICG Middle East Report, No.38, 21 March, 2005 www.crisisgroup.org

[6] Այս հայեցակարգը 1970-ական թթ մշակեց Իրանի Քրդական Դեմոկրատական Կուսակցության Գլխավոր Քարտուղար Ա. Կասեմլը:

[7] Жигалина О.И., Курдский вопрос в ИРИ: решение в диалоге сторон, Азия и Африка сегодня, No.10 ИВ РАН, М. 2006 с.29

[8] Вартанян А.М., Отношение Ирана к американскому плану"Большой Ближний Восток", (www.iimes.ru)

[9] Yehiav A., The Anti-Iranian Front: Egypt, Saudi Arabia, and Jordan, Middle East Review of International Affairs, Vol.11, No.1, (March 2007), p.9

[10] Եթե 2005թ. սկսած ԻԻԳՄ-ը հակված է ֆեդերալիզմի գաղափարին՝ հիմք ընդունելով համայնքային ինքնությունը և առաջ է քաշում Բասրայից Բաղդադ ընկած 9 շիական շրջաններից ֆեդերալ տարածք ստեղծելու գաղափարը, ապա Դաուան առավել ազգայնական և կենտրոնամետ կողմնորոշում ցուցաբերեց:

[11] Taremy, Kamran, Iranian Foreign Policy Towards Occupied Iraq, 2003-05, Middle East Policy, Vol. 7, No.4, Winter 2005, p.38

[12] Ehteshami A., Iran-Iraq Relations after Saddam, The Washington Quarterly Vol.26, No.4, (Autumn 2003) p.125